Ֆաշիստական Գերմանիան դարձել է ռազմական ճամբար։ Գերմանական ամրող տնտեսությունը յենթարկված և մի նպատակի—«մեծ պատերազմին» տենդորեն պատրաստվելուն։ «Յուղի վոխարեն թնդանոթներ»—այդպես է ժամանակակից Գերմանիայի լողունքը։ Ֆաշիստական դիվանազիտությունը սկսեց բացահայտորեն արհամարհանք ցուցադրել գետի միջազդային դաշնագրերը, դիվանազիտական ճանապարհով նախապատրաստելով պատերազմի սկիզբն առանց այն ձեւականորեն հայտարարելու։

<sup>\*)</sup> Գեստապո—Գերմանիայի պետական դադանի վոստիկանությունը, գերմանական Փաշիստական պահնորդական բաժենը։

Ֆաշիստական Գերմանիան իր բոլոր ավազակային հաշխվները չփառում եւ առանց ձեւականութեն պատերազմ հայտարարելու պատերազմ սկսելու վրա, չեղոքությունը խախտելու հնարավորության, պայցքարի քիմիական միջոցների հանցավոր ոգագործման, քաղաքների խաղաղ բնակչությունը վոչնչացնելու վրա: Իդուր չեւ, վոր Հիտլերը Փաշխտական կուսակցության Նյուրենբերդյան համագումարի ժամանակ, 1935 թվականի սեպտեմբերին, կաղմակերպված բանկետում՝ իր ճառում ասել եւ.

«Յեթե յես յերբեցք ուղենամ հարձակել թշնամու վրա, յես դա այլ կերպ կանեմ, քան Մուսուլինին: Յես ամսվա ընթացքում բանակցություններ չեմ վարելու և պատրաստություններ տեսնելու, այլ, ինչպես յես միշտ վարվել եմ իմ կյանքում, հանկարծակի կունամամ իմ թշնամու վրա, ինչպես գիշերային խալվարում փայլատակած կայծակ»:

1935 թվականի մարտի 16-ի որենքով Հիտլերը վերացրեց վերսայլի դաշնագրի<sup>\*)</sup> ուազմական սահմանափակումները: Դրանց անմիջականորեն հետո Փաշխտական Գերմանիան (1936 թվականի մարտի 7-ին) իր զորքերը մտցնում եւ Հունոսի համեմատաբար սպառազումականացված (ուեմիլտարիզացիայի յենթարկված) գոտին և զրանով Յելլոպայում զդալիորեն ուժեղացնում եւ իր ստրատեգիական գրությունը:

1935 թվականի սեպտեմբերին, Փաշխտական կուսակցության արգեն հիշատակված Նյուրենբերդյան համագումարի ժամանակ, կազմակերպվեց հակայական սազմական զորահանդես՝ մասնակցությամբ բազմաթիվ տանկային զորամասերի և ուղղմական զորեղ ավիացիայի: 1935 թվականի նոյեմբերին տեղի յեւ ունենում 1914 թվականի ծնվածների առաջին զորակոչը: 1935 թվականի հուլիսի 1-ին վերականգնվում եւ զերմանական գլխավոր շտաբը: Փաշխտական Գերմանիան բացահայտորեն հայտարարում եւ, վոր նա մտադիր եւ ծալվելու բանակը և ունենալու 12 կորպուս կամ 36 գիլիցիա:

1937 թվականի սկզբին այդ ծրագիրն արդեն գերազանցված

\*) Վերսայլի դաշնագրի համաձայն, վոր կնքել ելին հաղթող պետությունները—Ֆրանսիան, Անգլիան և այլն, հաղթված Գերմանիայի հետ, վերջնա իրավունք ուներ պահելու միայն սահմանափակ քանակությամբ զորք, ունենալու սպառազինման միայն առանձին անսակներ և այլն: Բացի զրանից, Ֆրանսիային սահմանակից Հունոսյան մարզում Գերմանիան չեր կարող ունեալ իր զորքերը: Մանրք. Խմբ.:

Եր : Գերմանական բանակի շարքերում արգեն կար մոտ 1. 300 հազար հողի, վորոնց թվում 240 հազար հողի ռազմական ուսուցումն աշխատանքային ճամբարներում անցնող, 30 հազարը—քաղաքական վոստիկանության շարքերում և 80 հազարը—պահեստի վիճակուներ, վորոնք ռազմական ուսուցումն անցնում են առանձին զորամասերում : Գերմանական բանակն իր քանակով համել և կատարալիստական յերեք խոչոր պետությունների,—Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի—բանակներին :

Սպառագինումների այդ ծրագրի իրագործումը և բանակի հետաղության ժամանական ծախքեր են պահանջում : Անգլիական բանակային շրջանների որդան «Բնենկերի» ավագանության մարդատաճայն (1937 թվականի փետրվար), Փաշիստական Գերմանիան 4 տարում սպառագինումների վրա ծախսել է 31,1 միլիարդ մարկ, ունենալով բյուջեյական ընդհանուր ծախքեր 57,4 միլիարդ մարկ : Սպառագինինելու արագընթացության մեջ առաջնության դափնին սպառականում և գերմանական Փաշիպմին, և տարեցտարի աճում են նրա սպառագինման ծախքերը :

ԱՀԱ «ԲՆԵՆԿԵՐԻ» ԲԵՐԱԾ ՑՈՒՑԱՆՇԱԿԱՆ ՏՎԱՅԱՆՔՆԵՐԸ—

Թվականներ	Բնդիանուր ծախքեր մի-	Սպառագինման լիարդ մարկով *)	ծախքեր
1933/34 • • • • •	9.700		3.300
1934/35 • • • • •	12.200		5.500
1935/36 • • • • •	16.700		10.00
1936/37 (նախական ավագանության)	18.800		12.600
		57.400	31.100

Ըստական գերմանիան այդ միջոցները հավաքում են յերկու ժողովրդական մասսաների հրեշտավոր շահագործման հաշվին, կիսաքաղց վիճակում դանվող բանվարների և գյուղացիների կենացական մակարդակը հսկայական չափով իջեցնելու հաշվին : «Մեծ պատերազմի» նախասպատրաստության նախատակներին են ծառայում՝ ամենասահմարձակ սպիտակի տեսողը, գերմանական ժողովրդի լավագույն զավակների մահապատիճները, խոշունքում ներն ու համակենտրոնացման ճամբարները :

Պետական ամբողջ ապարատը և Փաշիստական կուսակցությունն ամբողջովին բանել են այնպիսի ուղղություն, վորակեսղի ամենակարճ ժամանակամիջոցում ապահովեն Փաշիստական Գերմանիայի ռազմական գերակշռությունը նրա ապարատ հակառակ կորպորների նկատմամբ :

\*) 1 մարկը հավասար է 37 կոտեկի :

Յաշխստական Գերմանիան ձգտում է իր զեկավարությամբ՝ հաղաքել պետությունների Փաշխստական բրոկ։ Վորպես առաջին պարտնյոր, գերմանական Փաշխստանները գտան ճապոնական ուղղամամոլությունը։ Դրանում զարմանալի վոչինչ չկա։ Ճապոնական ուղղամոլությունը, զավթելով չինական հողերը, նույնպես իր աղքեսիան քողարկում է կոմունիզմի զեմ սպայքարելու աղողակներով, յերազում և ճապոնական մեծ կայսրություն ստեղծել։ Պրիմորյելից մինչեւ Ռեպալ։ Ճապոն-գերմանական ուղղամական դաշնաքը պետք է ապահովեր թե՛ Արևելում և աղողակներով, վոր յեթե ճապոնիային հաջողվի առաջինը հարձակվել ԽՍՀՄ վրա, այն ժամանակ Գերմանիան կկարողանա Լեհաստանի վրայով հեշտությամբ ներխուժել խորհրդային տերիտորիան։

## ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԻՏԱԼԻԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ԴԱՇՆԱԿԻՑՆ Ե

Այդ նույն հակախորհրդային դժով տեղի յեւ ունենում մերձակցում Գերմանիայի և Խտալիայի միջն։ Չնայած այն լուրջ հակասություններին, վոր կան Փաշխստական Խտալիայի և Հիտլերյան Գերմանիայի միջն։ (Հակասություններ Դանուրյան և Բալկանյան Յելբռոպայում)՝ յերկու աղքեսորները հեշտությամբ հակախորհրդային լեզու դասն։ Խտալիան և գերմանական Փաշխստանները միասնակի շահադրգոված են խսպանական ժողովրդական ճակատի ջախջախումով, Խորհրդային Միության միջադային հեղինակության թուլացումով, —Խորհրդային Միության, վորն իր հետեւղական ու վճռական խաղաղության քաղաքականությամբ փայլուն կերպով ցուցադրում է, վոր բանվորների և դյուցացիների սոցիալիստական պետությունն իր զարդացման համար ուրիշի տերիտորիաներ դրային է թալանչիական պատերազմի կարիք չի դդում։

«Լոչ մի կասկած չկա, վոր Գերմանիայի և Խտալիայի Փաշխստ կառավարիչները և Ճապոնիայի Փաշխստ ուղղամոլությունն արդեն վստած կլինելին համաշխարհային սոտերազմի հրդեհը, յեթե չիներ խաղաղության այնպիսի մի հուժկու յերկիր, ինչպիսին Խորհրդային Միությունն է, յեթե

միջազգային պրոլետարիատի շաբքերում տեղի չունենային լուրջ տեղաշարժեր Փաշիզմի դեմ պայքարն ուժեղացնելու և միասնական ժողովրդական ճակատ ստեղծելու ուղղությամբ, յեթե իսպանական ժողովուրդը չկարողանար այնքան հերոսարար հետ մղել Փաշիզմի դրոշները, յեթե Փրանական պրոլետարիատը չստեղծեր հակաֆաշիստական ժողովրդական ճակատ ու յեթե չինական ժողովուրդը չընթանալը ճապոնական ճակատում իր ուժերը միավորելու ճանապարհով»: (Գ. Դիմիտրով) — «Միջազգային պրոլետարիատի միասնությունը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն է»: Տես «Հոմոնունիատի չեղակի ինտերնացիոնալ» ժողովում 1937 թ. մայիսի № 5-ը):

Տիրահռչակ «Հոռմ—Բեռլին առանցքը» հանդիսացավ իտալու գերմանական համազործակցության արտահայտություն՝ պատերազմի և ազգբեսխայի համար: «Հոռմ—Բեռլին առանցքը» նշանակում է, վոր գերմանական և իտալական Փաշիզմը ձգտում է քայլքայել կոլեկտիվ անվտանգության սիստեմը և իր համար ապահովել զործողությունների լիակատար աղատություն: Այդ նպատակի համար Գերմանիան և Իտալիան փորձում են, փոխազարձ զիջումներով, դեպի Հարավ-Արեւելյան Յելլուսա Գերմանիայի թափանցման ակտիվությունը դիմադրելուց իտալիայի ժամանակավորակես հրաժարվելու ճանապարհով, Միջերկրական ծովում խոալական աղբեսսիվ դիտավորություններին Գերմանիայի կողմէց աջակցելու ճանապարհով ապահովել պլացզարմերի (դինադաշտերի) նախապատրաստությունն ապադա «մեծ պատերազմի» համար: Այսպիսով, դիվանագիտական «Հոռմ—Բեռլին առանցքը», վորի համար պրոտազանդա յե մղում Փաշիստական ամբողջ մասուը, հանդիսանում է մի զործեք, վորն ուղղված է կուեկտիվ անվտանգության և ընդհանուր խաղաղության դեմ, հանդիսանում է զավթողական պատերազմի նախապատրաստության անմիջական դորձիքը:

Թաշիստական Գերմանիային անհրաժեշտ է մերձենալ Փաշիստական իտալիային, վորպեսզի նա, Գերմանիան, իրականացնի իր փայլիայած քաղաքականությունը Ֆրանսիան շրջապատելու, Փոքր Անտանտան պառակտելու, Զեխոսլովակիայի վրա ճնշում դորձադրելու, խարիսող աշխատանք ծավալելու այն բոլոր յերկիրներում, վորոնք նշված են իրեւ զավթողական պատերազմի

պլացդարմեր (զինաղաշտեր) : Իր հերթին Փաշխտական Գերմանիան ձգում և ունենալ յելք դեպի Միջերկրական ծովն ու Ատլանտյան ովլիսանոսի ափերին հենակետեր ստեղծելու իր ռազմական նախատորմի համար (Խոպանական Մարտիկո և կանաբյան կղզիներ) :

Ֆաշխտական Խտալիան համադործակցելով Փաշխտական Գերմանիայի հետ Միջերկրական ծովում իշխելու պայքարում, հույս և ունեցել ուժեղացնելու իր գիրքերը բրիտանական իմպերիալիզմի դեմ, իսկ Յեվրոպայում—մրանսիայի դեմ : Բացի զրանից, ինչպես արդեն մատնանշվել է, յերկու ազգեստրներին միավորում և նրանց ընդհանուր առելությունը դեպի Սորհրդային Միությունը, խաղաղության հոր գործոնը : Այս հիմունքով տեղի ունեցավ խոտո-գերմանական ռազմական դաշինքի կնքումը, —մի դաշինք, զոր Փաշխտ ազրեսորների կողմից «մեծ ուժերազմ» նախապատրաստելու հետեւյալ ետապն և նշանակում :

Իր սպառապինումներով Փաշխտական Խտալիան հետ չի մընում իր դաշնակցից ու պարտնյուրից—Փաշխտական Գերմանիայից : Խտալիայի Փաշխտական կառավարությունը, Հարեւստանում ավազակային պատերազմ սկսելով, կազմակերպեց կանոնավոր բանակի յոթը նոր դիվիզիա և սև շապկավորների (Փաշխտական միլիոնիայի) նույնակեն յոթը դիվիզիա : Վերջին յերկու տարում Խտալիայում յերեան յեկան նաև մատնակելորեն և ամբողջովին մասում նիսանիզացիայի յենթարկված միքանի դիվիզիաներ : Ռոտարերկրյա, մատնավորապես զերմանական մամուլի տեղեկություններով, խտալիան զինամած ուժերը ներկայումս բաղկացած են 13 կորպուսից կամ 39 դիվիզիայից : Այդ զորքերը կաղմում են այսպես կոչված՝ արքայական բանակը և բազկացած են մինչեւ 400 հազար հոգուց : Բացի զբանից, կա նաև դադութային բանակ, —մինչեւ 100 հազար հոգի, և Փաշխտական «ազգային անվանելության միլիոնիա» (սև շապկավորները) —մինչեւ 250 հազար հոգի :

1937 թվականի սկզբում Փաշխտական Մեծ Սորհրդի նստաշրջանում Մուսսոլինին հրապարակեց խտալիան սպառապինումների ուժեղացման նոր ծրադիբուրը : Այդ ծրադրում նորից ընդունվեց, զոր յերկրի ամբողջ կյանքը պետք է յենթարկվի «մեծ պատերազմի» պատրաստվելու շահին : Բավական է մատնանշել, զոր Փաշխտական Մեծ Խորհրդի վորոշման կետերից մեկն տում է . . . «կատարել ազգի 18-ից մինչեւ 55 տարեկան հասակ ունեցող բալոր ակտիվ ուժերի միլիոնարիզացիա (ռազմականացում), պարբե-

բարար գորակոչելով մորիլիզացիայի յենթարկվող կոնտինուենտները»: Կարճ ասած՝ Փաշխտական Մեծ Խորհրդի վորոշումը փաստորեն հենց այժմ ամբողջ յերկերը փոխադրում ե պատերազմական դրության: Մուսսոլինին հայտարարեց, թէ իսպագ ժամանակված կադրային (բուն, Հիմնարկան) բանակը «կարճ ժամանակամիջոցում, սոսկ արքայական հրամանով» կարող ե ավելանալ-դառնալ մի քանի միլիոն հողի: Իտալիայի ռազմական բյուջեն 1937—38 թ. թ. հասավ 5·639 միլիոն լիրայի, նախորդ տարին համեմատությամբ ավելանալով 727 միլիոն լիրայով:

## ՃԱՊՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՆԴՈՐԵՆ ՍՊԱՌԱՋԻՆՎՈՒՄ

Ճապոնական ռազմամոլությունը, իր դավթողական գործողականություններով սրելով Հեռավոր Արևելքի դրությունը, նույնպես հայտարարում ե, թէ առանց սպառազինումներն ավելացնելու ձագոնիան չի կարող իրականացնել «անխղելի կապերը Մանջուրիայի հետ» և «Չինաստանի ու ԽՍՀՄ հետ հարաբերությունները կանոնավորելու քաղաքականությունը»: Ճապոնիայի ռազմական ծախքերը շարունակ աճում են, — 1933 թվականին 820 միլիոն իլյոն\*), 1935 թ. — 1·022 միլիոն, 1936 թ. — մինչև 1·059 միլիոն և 1937 թ. — 1·500 միլիոնից ավելի իլյոն: Ճապոնական ռազմական ծախքերն այժմ կազմում են ոլեստական ամբողջ բյուջեյի մոտ 60 տոկոսը, իսկ յեթե հաշվի առնենք նաև դադունի Փոնդերը, ապա ավելի շատ: Ճապոնական ռազմական մինիստրությունը մշակել ե «սպառազինումների լրացման» հատուկ պլան 6 տարվա հաշվով (1937—1942 թ. թ.): Այդ պլանով ծախքերը հաշվվում են 3 միլիարդ իլյոն: Այդ նշանակում ե, վոր «նորմալ բյուջեն» ամեն տարի ավելանալու յե 500-ական միլիոն իլյոն «լրացման» ռազմական ծախքերի համար:

Ճապոնական ռազմամոլությունը, վոր դաշինք ե կնքել դերմանական Փաշխտմի հետ, ինչպես և վերջինս, չի ուղում սպառազինումների բնադրավառում վորեն սահման և խոչնդուս ճանաչել: Ճապոնիայի ռազմական մինիստրության վերջին ծրագիրը նախատեսում ե, վորպես լրացում դոյցություն ունեցող 17 հետեւակդիմիզիաներին, կազմակերպել 8 նոր դիմիզիա, այլ կերպ ասած՝ մեկ ու կես անդամ ավելացնել բանակը: Ճապոնական տնտեսու-

\* ) 1 իլյոնը հառվասար և 35 կոտեկի:

թյունը յենթարկվում ե պատերազմի շահերին։ Լինելով անտեսապես թույլ յերկիր, ստիպված լինելով հումք ներմուծել արտասահմանից, ձապոնիան, ինչպես նաև Փաշխտական Գերմանիան, Հիմնականում դարդացնում ե արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք անհրաժեշտ են սպառալինումների ծրագիրն իրադուժելու համար։ 1937 թվականին համապատասխան դործարանների արտադրական կարողությունը կհասցվի տարեկան 3000—3500 ինքնաթիւի և 10000—12000 մոտորի, 1600—1700 տանկի, 1500 զրահապատ ավտոմոբիլի, 10000 հրետանային թնդանոթի և 150000 գնդացիրի։

Գերմանական, իտալական ու ճապոնական սպառալինումների տենդային աճումն առաջ ե բերում ռազմական ծախքերի աճումնաև մյուս կազիտալիստական յերկիրներում։ Անդիմական կառավարության լույս ընծայած «Սպիտակ գերքը» անդիմական սպառադինումների ծախքերը վորոշել ե 1,5 միլիարդ ֆունտ ստերլինգ։<sup>\*</sup>

Գլազարախարայի մոտ իտալական եքսպեդիցիոն կորպուսի ջախջախումից հետո գերմանական և իտալական Փաշխմը նոր զինված ուժեր և ուղարկում իսպանական ժողովրդի գեմ։ Ֆաշիստական Գերմանիան շարունակում ե Զեխոսլովակիայի վրա հարձակում պատրաստել, փորձում ե վերացնել Ավստրիայի ինքնուրույնությունը, Փաշխտական հեղաշրջումներ և պատրաստում թերզիայում և մի շարք ուրիշ յերկիրներում։ Ճապոնական ռազմամուլությունը ձգտում է ամրապնդել իր ռազմա-Փաշխտական գիլիատուրան, վորոշեսզի իրեն ազատ զգա ասիական մայր ցամաքում նոր բռնադրավումներ կատարելու համար, Փաշխտական իտալիան, չնայած հարեցական խաղաղ ժողովրդի գեմ կատարած արյունոտ բռնություններին, անդոր և նվաճելու և իրեն յենթարկելու հարեցստանը։ Հարեցստանում պատերազմը շարունակվում ե, վորը համառ բռնույթ և կրում և քիչ զոհեր ու գրամ չի կլանում իտալիայից։ Իտալական ժողովրդին եժան չի նստում նաև Փաշխտական ինտերլենցիան իսպանիայում։

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՎ ՊԱՅՔԱՐԵԼ ՖԱՇԻԶՄԻ

### ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Թաշխտ մարդակերները վառված ջահերով սլանում են աշխարհի վառողանկութերի մոտով, ձգտելով նոր մեծ պատրազմի հրդեհ առաջացնել։

<sup>\*</sup>) 1 ֆունտ-ստուբերլինգը հալսուար և 26 ու 10 կոտեկի։

«Ներկա ժամանակաշրջանում պատմությունը միջազգային պրոլետարիատի վրա դնում է մի մեծ միսսիա (առաջելություն) — մարդկությունը փրկել Փաշիզմի բարբարոսությունից, նրա պատրաստած նոր խմբերի խստական սպանդի սարսափներից :

Ողնել խսպանական ժողովրդին՝ աղատվելու Փաշիստ բռնակալներից և ինտերվենաներից, ողնել գերմանական և խոալական ժողովուրդներին՝ ջարդումիչուր անելու Փաշիստական ուժիմի զղթաները, ողնել չին ժողովրդին՝ ճապոնական զավթողների դեմ նրա մղած պայքարում, ողնել փոքր աղջերին՝ պաշտպանելու իրենց աղատությունն ու անկախությունը, Արևմուտքում և Արևելքում ստեղծել անառիկ բարյեր (արգելապիծ) Փաշիստական աղբեսիայի դեմ, —ահա տվյալ ետապում միջազգային պրոլետարիատի պատմական միսսիան կատարելու կոնկրետ ուղին: Յեղ այդ միսսիայի կատարումը միանդամայն համապատասխան ե նրա ուժերին, յեթե նա գործի միասնաբար և կազմակերպված»: (Գ. Դիմիտրով) · «Միջազգային պրոլետարիատի միասնությունը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն ե»: Տես «Կոմունիստիչների ինտերնացիոնալ» ժուռնալ № 5, 1937 թ. մայիս) :

Աղջերի լիդայի և խսպանական դործերին «չմիջամտելու լոնդոնի կոմիտեյի» որինակը ակնբախ կերպով ցույց է տալիս, վոր վոչ մի հորդորանք չի կարող զսպել պատերազմի Փաշիստ հործիուներին: Ֆաշիստ աղբեսորների ձեռքից վասվող ջահը խլելու համար կա միայն մի ներդորուն միջոց: Դա միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունն ե, պրոլետարիատի, վոր իր շուրջն ե համախմբում բոլոր աշխատավոր խովերին, բոլոր առաջադեմ, դեմոկրատ տարրերին, խաղաղության բոլոր իսկական կողմնակիցներին:

Իր «Արմերիայի գասերը» հոդվածում\*) գերմանական Փաշիստների չափած պրովոկացիայի և խսպանական նախահանդսուային քաղաք Արմերիայի ոմբակօծության առթիվ, —վոր կատարել եր գերմանական սաղմական նախատորմը, —ընկ. Դիմիտրովը դրել ե.

\*) «Պատվագա», 3 հունիսի 1937 թ.:

«Ճշմարիտ վոր հարկավոր և քաղաքական կույր լինել, վորպեսդի մարդ չտեսնի, թե ի՞նչպիսի հակայական նշանակություն և ինչ հետեանքներ կունենար բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների միահամուռ հարձակումը յուրաքանչյուր յերկրում և ամբողջ աշխարհում։ Այդպիսի յելույթի միջոցով կարելի յեր շարժել և մորիլիզացիայի յենթարկել ամենալայն ժողովրդական մասսաներին։ Անդիմական պահպանողականները, վոր հովանավորում են Հիսուսի ու Մուսասլինի մեքենայությունները, պատոին սեղմքված կլինելին։ Անդիմական ու Փրանսական կառավարությունները ստիպված կլինելին յեռանդուն միջոցներ ձեռք առնել գերմանական և խոալական ֆաշիզմի ինտերվնուցիայի դեմ։ Կարելի կլիներ խաղանիայից հեռացնել տալ գերմանական և խոալական զինված ուժերը, խոպանական ջրերից հետ կանչել ինտերվնունանների սալմանավերը։ Կարելի կլիներ հասնել այն բանին, վոր Փաշխատական ինտերվնուններին ու նիմանողներին կակսելին գիտել, ինչպես արժանի յեն նրանք, իբրև ազգեստների, ավաղակների, ծովահենների։ Ամբողջ աշխարհում բանվոր դասակարգի միահամուռ յելույթն խաղանական հանրապետության և նրա հերոսական մարտիկների համար կապահովեր վոչ միայն անսահման բարոյական, այլև վիթխարի նյութական ոգնությունը։ Այս ամենը, անշուշտ, կարագացներ խաղանական ժողովրդի հաղթանակը։ Վերջապես, ամբողջ աշխարհի առաջադեմ ուժերի միահամուռ զրոհով կարելի կլիներ սանձահարել պատերազմի հրձիգներին։»

II և Ամստերդամի ինտերնացիոնալների մի շարք պարագլուխների, վորոնք վճռողական դեր են խաղում այդ ինտերնացիոնալների քաղաքականությունը վորոշելու մեջ (Ազլեր, Դե-Բրուեկեր), դուրս են գալիս գործողությունների միջազգային միասնության դեմ՝ ի պաշտպանություն խաղանական ժողովրդի։ Անդիմական տրեգ-յունիոնների Գլխավոր խորհրդի լիգերները (պարագլուխները) (Ախտրին, Բելլին և այլն), բելգիական արհմիութենական գործիչները և չեխական սոցիալ-դեմոկրատները, — ահա թե ովքեր են շարունակում միասնության դեմ դուրս գալ այն մոժենտին, յերբ խաղանիայի սաղմանակատներում վճռում ե Յելլրոպայի բոլոր ժողովուրդների բախտը, ահա թե ավքեր են, վոր

իրականում դրադիում են զանցարարությամբ (попустительство), և շատացնելով գերմանական և խոպական պազանացած ֆաշիզմի արյունոտ պրովոկացիաները: Ո Խնտերնացիոնալի քարտուղար Ֆ. Աղեքը հանրապետական խոպանիայում կատարած էր չըշադարձության ժամանակ շարունակում եր կատաղի կամպանիա մղել ժողովրդական ճակատի գեմ, և շատացնելով խոպանական տրոցկիստների գավաճանական զբոհները, — խոպանական տրոցկիստների, ֆրանկոյի և խտալո-գերմանական ֆաշիզմի այդ գործականների, վորոնք ձգտում են պառակում առաջ բերել ժողովրդական ճակատում և բաց անել ճանապարհը խոռվարանների և ինտերվենտների բանակների համար, ինչպես այդ պարզ ցույց տվեց վերջերս Բարսելոնում, Կատալոնիայի մայրաքաղաքում, ունդի ունեցած տրոցկիստական-ֆաշիստական պրովոկացիան:

Յերբ հակախորհրդագյին տրոցկիստական կենտրոնի դատավարությունը պարզեց, վոր Խորհրդավյան Միության տերիտորիայում սոցիալիզմի զարչելի ռենեգատի, հայրենիքի գալաճան և ժողովրդի թշնամի Տրոցկու ղեկավարությամբ, պատերազմի գերմանական և ճամփոնական համարների առաջարություններով աշխատում եր վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու տեսաբիսանների բանդան, ապա ի՞նչպես պահպանին իրենց Ո Խնտերնացիոնալի լիդերները: Նրանք բացահայտորեն գուրս յեկան պաշտպաններու ֆաշիզմի և պատերազմի հրձիկների մերկացված գործակալներին:

## ԱՆՌՈՒՔԱԲԱՐ ՊԱՅՔԱՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ

Մինչեւ տրոցկիզմի դեմ մղվազ պայքարը հանդիսանում է այն պայքարի բաղկացուցիչ մասը, վոր միջազգային պրոլետարիատը մղում է պատերազմի դեմ, և ՍՀՄ պաշտպանության, բանվորական նակատի համար, ֆաշիզմի ու պատերազմի դեմ: Իր հերթին տրոցկիզմի դեմ մղվող պայքարն այն պայքարի բաղկացուցիչ մասն է, վոր մղվում է բանվորական շարժման մեջ պրովոկացիաների և լրտեսության դեմ:

Միջազգային տրոցկիզմը ֆաշիզմի գործակալությունն է: Բանվանական տրոցկիստաները, կատարելով վերմանական և խտական ինտերվենտների ուղղակի առաջադրությունը, պայքար են մղում խոպանական ժողովրդական ճակատի դեմ, բանվոր դաստ-

կարդի միասնության, արհմիութենական միասնության դեմ, սոցիալիստական և կոմունիստական յերիտասարդությունը միավորելու դեմ, միասնական կարգապահ ժողովրդական բանակի դեմ: Իսպանական արոցկիստներն ամենավոխերիմ թշնամիներն են ինտերնացիոնալ բրիվագիների, վորոնց նրանք տալիս են «արեսուրիական դվարդիա» անունը: Իսպանական արոցկիստներն ամենավոխերիմ թշնամիներն են Խորհրդային Միության, վորն իսպանական ժողովրդին բարոյական ու քաղաքական վիթխարի ողնություն և ցույց տալիս:

Բնկ. Դիմիտրովը գրել է.

«...Պայքար մղելով Փաշիզմի դեմ, անհրաժեշտ և ամենայն անողոքությամբ հարվածել նրա տրոցկիստական գործակալությանը, վոր հանդիսանում է լրտեսների, դիմելուսանտների, տեռորիստների, դերմանական Փաշիզմին ու ճապոնական ռատմամոլությանը ծառայող պրովոկատորների բանդա: Տրոցկիստական վիժվածքները Փաշիստական հետախուզությունների առաջարկություններով քայլայիչ աշխատանք են կատարում սոցիալիզմի յերկրի դեմ, անում են ամեն ինչ, վորպեսզի խորացնեն պառակտումը և թույլ չտան բանվորական շարժման միասնություն մյուս յերկիրներում, աշխատում են ներսից քայլայիչ ժողովրդական ճակատի շարժումը: Նրանք ամենուրեք հանդես են գալիս իրեն բանվորական շարժման վնասաբարներ, Փաշիզմի դեմ ժողովրդական մասսաների մղած պայքարի կաղմալուծիչներ: Ֆաշիզմի և պատերազմի դեմ միջազգային պրոլետարիատի միասնությունն աներևակայելի և անհնարին և առանց Փաշիզմի տրոցկիստական գործակալության դեմ պայքարելու»: (Դ. Դիմիտրով, — «Միջազգային պրոլետարիատի միասնությունը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն ե»: Տե՛ս «կոմունիստիչների ինտերնացիոնալ» ժուռնալ 1937 թվականի մայիսի № 5-ը):

ԱՄՔՈՂԶ ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ  
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՖԱՇԽՍԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ ՀԱԼՔԱՆԱԿ ՏԱՆԵԼՈՒ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Իսպանական ժողովրդի հերոսական պայքարը միջազգային ամբողջ պրոլետարիատի սեփական գործն է: Իսպանիայի դեպքերի որինակից ակնբախորեն յերկում է, թէ ինչպիսի հսկայական

Աեր և խաղում համերաշխության միջազգային շարժումը։ Այն մոմենտին, յերբ Փաշվաստկան Գերմանիան և Խոսլիան իրենց տեխնիկայով ու զորքերով ողնության յեկան խսպանական խոռովարաններին, այն մոմենտին, յերբ յեփրապական դեմոկրատիաները, քողարկվելով Լոնդոնի «չմիջամտելու կոմիտեյով», միակողմանի «չեղոքություն» հայտարարեցին, միջազգային պրոլետարիատը, բոլոր յերկիրների ժողովուրդները և ամենից առաջ Խորհրդային Միության բանվոր գասակարգն ու ժողովուրդները ներգործուն, ուժեղ աջակցություն ցույց տվին Խսպանիայի բանվոր դասակարգին ու ժողովուրդներին։

Հազարավոր կամավորներ—հակաֆաշիստներ ժամանեցին Խսպանիա, վորպեսզի իրենց խսպանական յեղայրների հետ միասին պայքարեն Փաշիզմի դեմ։ Խնտերնացիոնալ բրիդադները հերոսաբար կռվում են Խսպանիայի բոլոր ռազմաճակատներում, ցույց տալով կարդապահության և ժողովուրդական ճակատին անձնուրացորեն նվիրված լինելու որինակ։ Խսպանիայի ժողովրդական մասսաները, միջազգային պրոլետարիատը և բոլոր աշխատավորները յերբեք չեն մոռանա Հանս Բեյմլերի, —11-րդ բրիդագիր Քաղկոմիսարի, գերմանական հին հեղափոխական մարտիկի անունը, կապիտան Գիլդո Պիչելիի—Գարիբարդիի անվան բրիդագիր խոսլական կոմունիստի անունը, քաղկոմիսար Ռայլի Ֆոկսի, —անդիմական դրողի և շատ ուրիշների անունները, վորոնք հերոսների մահանկան խսպանիայի ռազմաճակատներում, ողնելով խսպանական ժողովրդին՝ աղասիլելու Փաշիստ բոնադրավիչներից։

Ընկ. Անդրե Մարտին «Խսպանական ժողովրդի պատերազմն անկախության համար» իր հոդվածում<sup>\*)</sup> դրել ե.

«Իհարկե Խսպանիայում դրությունը մինչև այժմ ել լուրջ է։ Ֆաշիստական թշնամին հորսապես զինված է։ Զնայելով վերահսկողությանը, խսպանական Փաշիզմն ոգտվում է Փաշիստական յերկու խոչընթաց պետությունների ոժանդակությունից, իսկ յեփրապական դեմոկրատիայի յերկիրները, —առաջին հերթին Անդվիան ու Ֆրանսիան, —հակառակ այդ յերկիրների ժողովրդի կամքի, ողնում են Խսպանիայի ժողովրդը ստրկացնելուն։ Խսպանիայի որինական կառավարությանը զենքի և ռազմանյութերի գնումներն արգելելը, ինտերնացիոնալ կամավորների մուսաքն արգելելը, այն «վերահսկողությունը», վորն իրականում հանդիսանում է հանրապետական

<sup>\*)</sup> Տե՛ս «Բոլեկիկ» ժուռնալի 1937 թ. հունիսի 1-ի № 11-ը։

Իսպանիայի ողակում, մինչդեռ գերմանական և խոալական շզգենատվերն ու սպառնակները շարունակում են անարդել կերպով ամեն տեսակ ողնություն հասցնել ֆրանկոյին, — «Հեղության» այս բոլոր միջոցառումները միայն ողնում են Փաշիստներին:

Միջազգային ողնությունը պետք է վոչ միայն շարունակվի, այլև նշանակելիորեն ընդլայնվի: Պետք է կազմակերպել պարենի, հաղուստի, գեղարայքի, բժշկական կազրերի հայթյումը հանրապետական Խոսպանիայի մարտիկներին: Հարկավոր է փրկել կանաց ու յերեխաներին, դուրս տանելով նրանց մի յերկրի սահմաններից, վորը վառվում է Փաշիստական սմբակոծությունից: Հարկավոր է խոսպանական հանրապետությանը տալ նույնակիսի իրավունքներ, վորավիսիներից ողտում են մյուս պետությունները: Այն ողնությանը, վոր ցույց են տալիս Խորհրդային Միության աշխատավորները, պետք է անհապաղ միանար բոլոր յերկիրների բանակորների միասնական ճակատի ողնությունը, բոլոր նըրանց ողնությունը, ում համար թանել և ազատությունը: Վորքան ուժեղ մինի այդ միջազգային ողնությունը, վորքան շատ նաև սմբապնդի ու միաձուլի ժողովրդական ճակատը և Խոսպանիայի ժողովուրդների հակաֆաշիստական միասնությունը, այնքան չուտ կլինի հաղթանակը»:

Այն, ինչ վոր Խոսպանիայում անում են գերմանական և խոալական Փաշիստները, Փաշիստ աղքանուրները կսկսեն անել ամեն մի ոտար տերիտորիայում, հենց վոր մոմենտը հարմար համարեն: Փաշիստ ավազակների համար չկա ուրիշ պետությունների սահմանների անձեռնմխելություն: Նրանք վործ չունեն ժողովուրդների անկախության հետ:

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ ընկ. Լիսովինովը 1937 թվականի մայիսի 28-ին յելույթ ունենալով Աղդերի Լիգայի խորհրդի նիստում, ընդգծեց, վոր Փաշիստական Գերմանիայի և Խտալիայի նիստերինցիան, զա «Աղդերի Լիգայի անդամներից մեկի տերիտորիան ոտարերկրյա զինված ուժերը բռնությամբ մացնելու անլինելի դեմք և, ամենակոսիտ ձեւի աղքանությի գեպք»:

Եեթե Գերմանիան և Խտալիան ռազմական ողնություն ցույց չուային խոռվարաբներին, հանրապետական բանակը վաղուց դեռ Ֆրանկոյի խոռվարար բանութաների հախեցը յեկած կլիներ:

«Անովարարներին ողնելու համար, —իր յելույթում  
մատնանշել և ընկեր Լիտովինովը, —իսպանիա թափվեցին  
տասնյակ հազարավոր լավ ուսուցված և դինված ոտարեր-  
կրացիներ, վորոնցից շատերը դանվում էյին ոտար պետու-  
թյունների զինվորական ծառայության մեջ և իսպանիայի  
տերիստորիայում կազմեցին խոչըրաթիվ զորամասեր։ Մի  
քանի դեպքերում իսպանական հանրապետական բանակի  
գեմ խոշոր ճակատամարտեր էյին մղում բացառապես այդ  
ոտարերկրյա զորամասերը, ոտարերկրյա գեներալների հրա-  
մանատարությամբ։ Իսպանական քաղաքները ոմբակոծվում  
են ոտարերկրյա ինքնաթիւներով, վորոնց վարում են ոտա-  
րերկրյա ողաչունները։ Մաղրիդի քառորդ մասը, ամբողջ  
Գեոնիկա քաղաքը և բազմաթիվ ուրիշ քաղաքներ ու զյուղեր  
վոչնչացված են ոտարերկրյա ավելացիայի միջոցով։ Կարելի  
յե ասել, վոր ներկայումս իսպանական հանրապետական բա-  
նակը ստիպված և զինված սպայքար մղել վոչ այնքան խոռ-  
վարարների, վորքան այդ յերկիրը ներխուժած ոտարերկրյա  
ինտերվենտների գեմ»։

Խորհրդային Միությունը պարզ և առանց յերկմտության  
վորոշեց իր դիրքն իսպանիայի դեպքերի նկատմամբ։ Ֆաշիստ  
ինտերվենտները փորձում են իսպանիան զարձնել համաշխարհա-  
յին նոր սովանդի զինադաշտ։ Խորհրդային Միությունը բազմիցն  
նախազգուշացրել և յեվրոպական այն պետություններին, վորոնք  
մինչև այժմ չեն ուղում տեսնել, վոր, յերես տալով աղքանուր-  
ներին՝ նրանք նողաստում են համաշխարհային զավթողական պա-  
տերազմը հրահրելուն։ Ֆաշիստ աղքանուրները կանդ չեն առնի  
այն բանի առջև, վոր ուրիշ ժողովուրդների անկախության և  
հողերի գեմ զինված ձեռքով վոտնձգություններ անեն։ Սահ-  
ման չունեն պատերազմի ֆաշիստ հրձիկների ավաղակային ա-  
խորժակները։

Իսպանիայում մղվող պատերազմի ընթացքը ակնրախորեն  
ցույց է տալիս, վոր Փաշիստ ինտերվենտները վոչնչի առաջ կանդ  
չեն առնում, յերբ ձեռնամուխ են լինում իրականացնել իրենց ա-  
վաղակային պլանները։ Նրանք զինվորական կոչիկով վոտնատակ  
են տալիս մարդկայնության և իրավունքի ամենատարրական  
ոլորտնքները։ Նրանք կազմակերպում են խաղաղ քաղաքների

արյունոտ կամէրածություն, սպանելով՝ տասնյակ հաղարավոր բոլորովին անմեղ կանանց ու յերեխաներին:

Ազգերի լիգայի անդորրությունը, բուրժուական դեմոկրատիայի պետությունների զանցարարությունը ճենառու յեն միայն պատերազմի հրձիղներին:

«Փաշիստ ազրեսորներն այդպիսի անսլատիք արարքներին ընտելացվել են զիջումների և ազրեսորի հետ համաձայնությամբ, վոր կիրառել եւ մինչեւ այժմ ել կիրառում և Անդլիայի և Ֆրանսիայի բուրժուազիան: Յեթե դործը կախված լիներ Անդլիայի ու Ֆրանսիայի կառավարություններից, իսպանիայում ևս կիրկնվերնույնը, ինչ վոր տեղի ունեցավ Հարեւստանում և Մանջուրիայում, վորոնեղ մինչեւ ատամները զինված ֆաշիստ ազրեսորը հաղթանակ տարավ անդեն ժողովուրդների դեմ: Բայց իսպանիայում ֆաշիստ խոռվարաբները և ֆաշիստ ինտերվենտները ստիպված յեղան դործ ունենալու այնպիսի մի յերկրի հետ, վորոնեղ աշխատավորները մորիլիզացիայի յենթարկեցին իրենց ուժերը՝ ժողովրդական ճակատի հզոր շարժմամբ հակահարված տալու ֆաշիզմին, —այն ել՝ այնպիսի մի յերկրի հետ, վորի պայքարը ֆաշիստների դեմ, ինչպես ասում և ընկեր Ստալինը, դարձավ ամբողջ առաջավոր և պրոգրեսիվ մարդկության դործը»: («Բոլշևիկ», №10, 1937թ. մայիսի 15):

Խորհրդային Միությունը խաղաղության, կուլտուրայի և բոլոր ժողովուրդների աղատության մեծագույն պատվարն է: Պրոլետարական գիլտատուրայի յերկաթե պատի վրա իրենց ճակատներն են ջարդում տրոցկիստական վնասարարները, լրտեսները, գիլերսանտները, տեսորիխատները, գերմանական ֆաշիզմի և ճապոնական ռազմամոլության բոլոր վարձկան դործակալները: Պատերազմի ֆաշիստ հրձիղներին կատաղեցնում ե այն, վոր գոյություն ունի անպարտելի Խորհրդային Միությունը, վորը կապիտալիստական աշխարհի բոլոր աշխատավոր մասսաների համար մի փարոս և դեպի սոցիալիզմի հաղթանակը տանող ճանապարհին:

Փաշիզմի դեմ ամբողջ աշխարհի աշխատավորների մզած մեծ պայքարում հակայական նշանակություն ունի համերաշխության այն շարժումը, վոր ամբողջ աշխարհում կազմակերպում են

Մոնղի (հեղափոխության մարտիկներին ողնող միջազգային կազմակերպություն) սելցիաները: Զգտելով իր թիկունքն անվտանգ դարձնել հեղափոխական յերւալիներից՝ Փաշիզմը հրեշտավոր սպիտակ տեսոր ծավալեց ժողովրդական մասսաների դեմ: Ֆաշիստական զնդանների և համակենտրոնացման ճամբարների կալանավորները հարյուր հաղարների յեն համառում: Մահապատճեններն ու խոշտանգումները, դադանային սպիտակ տեսորը, — սրանք հանդիսանում են Փաշիստ հրձիգների պատերազմի նախապատրազմական բաղկացուցիչ մասը:

Ֆաշիզմի այդ զոհերին բարոյական ու նյութական ողնություն ցույց տալը, ժողովրդական ամենալայն մասսաների մորթիվզացիսն սպիտակ տեսորի դեմ պայքարելու համար, — ահու Մոնղի խնդիրը: Մոնղը գրավում ե հակաֆաշիստական և հակապատերազմական ֆրոնտի ամենակարեռը նակատամասերից մեկը:

Խաղանիայում «Կարմիր ողնությունը» (Մոնղը) հոկայական աշխատանք և ծավալել հանրապետական բանակի վիճակոր մարտիկներին ողնություն ցույց տալու համար, կազմակերպել և հարցուալոր հիմնադանոցներ և վիրակասրման կայտներ, հոգում և սպանալած մարտիկների յերեխանների մասին, փախստականների մասին, վորոնք փափչում են Փաշիստական դատաստանից: Խաղանիայում Մոնղը իսկական ժողովրդական «Կարմիր խաչ ե»:

Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Սկանդինավյան յեղիբներում, — ամենուրեք Մոնղի կազմակերպություններն ուժեղացնում են իրենց աշխատանքը հանրապետական խաղանիային ողնելու զործում, թելքանին, Ռակոչիին, Անտիկայնենին, Պրեստենին և կապիտալի բանտերում տառապող բոլոր մյուս հեղտիփոխական մարտիկներին պաշտպանելու գործում: Մերկացնելով Փաշիզմի գաղանությունները, աշխատավորների լայն մասսաներին վոտքի հանելով Փաշիստական ռեակցիայի գերիններին պաշտպանելու համար՝ Մոնղը հենց դրանով նպաստում է հակաֆաշիստական ճակատի գրուների տակ ժողովրդական մասսաներ միավորելուն: Ամբանդնելով աշխատավորների՝ միջազգային համերաշխությունը՝ Մոնղը հենց դրանով ակտիվորեն նպաստում է շովինիզմի և սպազմատենչ Փաշիզմի մարդարաց պրոպագանդայի դեմ մըղ-վող պայքարին:

Որոստոսի 1-ի որը, — Փաշիզմի ու պատերազմի դեմ մըղվող սայշարի միջազգային որն — ամբողջ աշխարհի աշխատավոր մաս-

սաները միջազգային պրոլետարական համերաշխության դրոշի տակ իրենց բոլոր ուժերը միավորում են մարդկության մահացութշնամու—ֆաշիզմի դեմ։ Մարքսի, Ենդելսի, Լենինի, Ստալինի անպարտելի գրուչի տակ, Կոմունիստական ինտերնացիոնալի գրուչի տակ՝ բանվորներն ու աշխատավորները, կանայք ու յերիտասարդությունը, Կոմունիստներն ու բոլոր գիտակից բանվորները, Հաջողեցնելով բանվոր գասակարգի գործողությունների միասնությունն աղքային և միջազգային մասշտաբով՝ կրարձրացնեն իրենց ցասկու ձայնը։

Դա՛րս ֆաշիստ ինտերվենտներին հապանիայից։

Կորչե՛ն ֆաշիզմ ու պատերազմը։

Կորչի՛ գերմանական ֆաշիզմին ու նապենական ռազմամերությանը ծառայող լրսեսների, դիվերսանտների, տեղորիստների, պրովոկատորների տրոցլիստական բանդան։

Հանուն բանվոր դասակարգի միասնության։

Հանուն ժողովրդական նակատի, ընդդեմ ֆաշիզմի և պատերազմի։

Հանուն սոցիալիզմի հաղթանակի ամրող աշխարհում։

Յաշխստ ինտերվենտների արյունոտ պատերազմն իսպանական ժողովրդի գեմ—մի ահավոր նախազդուչացում և ամրող աշխարհի աշխատավորներին։ Պատերազմի հրձիգների ալազակային ձեռքը կարող է կտրել միայն միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունը։



Որօն. 1940 թ.

2425

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

սով  
5 վ.  
11 վ.

տպված և  
դրաշը ծածանվում և  
հաստատուն և

պիտի և լինի  
պրոցը, վորք հաղթականորեն ծածանվում և  
հաստատուն, հավատարիմ և

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0016112

-054-

ԳԻՒԾ 50-ԿՐՈ.

359

A II  
10049

10049

ՀՅՈՒՅՆ

ԱՐԳՍ

ՊՐՈΤԻՎ ՓԱՆԻԶՄԱ Ի ՎՈՅՆԻ

Издание ЦК МЭПР-а Арм. ССР  
Ереван, 1937